

The Kaffa lives of the desert Fathers, a study in Armenian manuscript illumination by Nira Stone, Lovanii, 1997.

Նիրա Սթոունի աշխատությունը նվիրված է մի հայերեն ձեռագրի՝ «Հարանց վարդին», որը գրվել է նկարադարձվել է Կաֆայում (Ղրիմում) 1430 թ. Թագեոս Ավրամենցի ձեռքով: Սույն ուսումնասիրությունը սկզբում գրվել է որպես ատենախոսություն (երբայրեն յեղվով) և պաշտպանության ներկայացվել էր Երուսաղեմի երթուղիական համալսարանին (1992 թ.): Հետագայում թարգմանվել է անգլերեն և այժմ հրատարակվել առանձին գրքով՝ «Corpus Scriptorum christianorum orientaliu» մատենաշարում: «Հարանց վարդ» մատյանն այժմ պահվում է Երուսաղեմի հայկական պատրիարքարանի մատենադարանում և կրում 285 համարը: Ձեռագրերը մինչ այդ էլ գրավել էր առանձին մասնագետների ուշադրությունը, սակայն հանգամանալից ուսումնասիրության է արժանացել առաջին անգամ: Ձեռագիրը մեծ հետաքրքրություն է ներկայացնում թե՛ իր մեջ ընդգրկված նյութերով, թե՛ նկարազարդումներով:

Ն. Սթոունի գրքում հանգամանալից քննված են ձեռագրի ստեղծման պարագաները, այդ թվում՝ Ղրիմի հայկական գաղութի սյուրբանները, ժամանակի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի առանձնահատկությունները, կրոնի մշակութային նշանակությունը և նրա ազդեցությունը արվեստի վրա:

Մատյանում ամփոփված են վարդապետական նյութեր՝ կապված բրիտանացի առաջին ճգնաժամների գործունեության հետ: Ապաստանելով Երզնկայի, Ասորիքի, Պաղեստինի անմարդանակ վայրերում՝ անապատներում, քարայրներում

այդ ճգնաժամները ստացան «անապատականներ», «սուրբ հայրեր» անվանումը:

Անապատական վանականության հիմնադիրն էր Անտոնիոս Մեծը (IV դար), որն ունեցավ բազում հետևորդներ, իսկ նրանց ճգնաժամյա վայրերը դարձան ուխտատեղիներ: Բազմաթիվ այցելուներ տարածում էին նրանց համբավը: Քանի որ գոյություն ունեին սուրբ հայրերի վարքերի բազում տարբերակներ, հայ թարգմանիչները հաճախ ստիպված էին զգալի աշխատանք կատարել ընտրելու համար առավել հավաստի թվացող բնագրեր: Այդպիսի աշխատանք է ձեռնամուխ եղել և Թագեոս Ավրամենցը, որը, ինչպես ինքն է գրում իր հիշատակարանում, «...յոյժ տառապանար և աշխատութեամբ զարհանապաղ զլատագոյնն ընտրելով և զճարտագոյնն խուզելով և համառատն թողնելով՝ զկատարեալ պատմութեան հետեւելով ժողովեցի, բրդեցի օրինակը ոչ սակաւ, որչափ ձեռնահաս եղէ գտանել»: Օգտագործելով տարբեր աղբյուրներ, Թագեոս Ավրամենցը նրանց միջից ընտրում էր «ճարտագոյնն», քանի որ «ամենայն պատմութիւն այլևայլ էին գրեալ, մինչ հարկ եղև և ի յունաց բերել արիւնակ»:

Թագեոս Ավրամենցը ուսանել է Կաֆայի նոր վերականգնված Ս. Անտոն վանքի բարձրագույն հոգևոր դպրոցում՝ ընդունապետ սեր Սարգսի մոտ: Իր մի այլ ձեռագրի հիշատակարանում նա պատմում է Սարգիս ընդունապետի դասընթացների մասին. «...մեզ եղբարցս՝ տէր Թորոսին և տէր Սիմէոնին և ինձ՝ յետեալ փանաքոյս Թագեոսի, որ զլուծմունքն փոխեցի. զամէն աւուր զգասն միայն: Ի ուշիկը և հանդարտ կարդացաք զՓորփիւրն և զԱրիստոտէլն...»: Սարգիս ընդունապետի դասընթացների մասին կան բազում վկայություններ նաև նրա այլ աշակերտների գրառումներում, ինչպես օրինակ, գրիչ և մանրանկարիչ վարդապետ Բրիտոսատուրի և վերջինիս սան Օգսենտի մոտ:

Կարելի է եզրակացնել, որ Թագեոս Ավրամենցը

1 Э. Корхмазян. Армянская миниатюра Крыма. Ереван, 1978. Н. Вуссхаузен. Studien zu den ersten illustrierten Harane Vark in der Handschrift Jerusalem, Bibliothek des armenischen Patriarchats Sowrb Hakob, cod. 285, «Classica et Mediacvalia»: Studies in Honor of Ioseph Szoverffy. Washington and Leiden: 1986. Н. Вуссхаузен. Die illustrierten armenischen Harane Vark und Cassoni, «Quinto Simposio internazionale di Arte Armena Venice, 1988.

2 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյանը. մասն II, Իրեվան, 1955, էջ 400:

3 Նույն տեղում, էջ 390:

մենցը չի եղել սովորական գրիչ-ընդօրինակող, այլ բանիմաց գիտնական և թարգմանիչ, որը իր կազմած ձեռագրի տեքստի համար ոգտագործել է թե՛ հայերեն, թե՛ հունարեն օրինակներ: Ի դեպ, ընտրված վարքերի շարքում կան նաև ալգալիս սրբերի՝ Գրիգոր Նարեկացու և ներսես Շնորհալու վարքերը:

Քաղեոս Ավրամենցի կազմած մատյանը ունի բազմաթիվ մանրանկարներ՝ 45 ամբողջական էջ դեղանկար նկարներ և մեծ թվով շատ փոքրիկ պատկերներ տեքստում: Հորինվածքները և կերպարների պատկերման եղանակը շատ ուրույն են և շունեն նախօրինակներ (համեմայնդեպս այդպիսիք չեն գտնվել): Հայկական մանրանկարչության պատմության մեջ սա այդ բովանդակությամբ ձևագրի նկարազարդման առաջին օրինակն է և թերևս ոչ միայն հայկական, Այդ է նշում նաև Ն. Սթոունը. «Սթոունը հավանականությամբ Երուսաղեմի ներկա 285 ձեռագիրը, թվագրված 1430 թ., տարրեր լեզուներով գրված («Հարանց վարք» պարունակող) ձեռագրերից առաջիններից մեկն է, որ նկարազարդվել է այդքան առատորեն»<sup>4</sup>: Խնկ մեր ձեռագրի մանրանկարների համար անմիջական նախօրինակ չի եղել կամ չի պահպանվել, սակայն մի քանի սուրբ հայրերի կերպարները պատկերվել են համաձայն բյուզանդական արվեստում՝ սրբապատկերներում (իկոնաներում) և որմնանկարներում նրանց կանոնացված պատկերագրությանը, որը ստացել է կայուն բնույթ: Ն. Սթոունը մանրակրկիտ աշխատանք է կատարել՝ հնարավոր նախօրինակներ փնտրելով առանձին կերպարների համար: Սակայն ոչ բոլոր սուրբ հայրերի պատկերներն ունեն կանոնացված պատկերագրական տիպ, ուստի մանրանկարների հեղինակին անհրաժեշտ եղավ որոշ ստեղծագործական աշխատանք կատարել ինչպես այդ կերպարները պատկերելու ուղղությամբ, այնպես էլ առանձին տեսարանների հորինվածքներ կերտելու համար: Ինչ վերաբերում է Քաղեոս Ավրամենցի մանրանկարների ոճական առանձնահատկություններին, ապա նրանք բնորոշվում են ինքնատիպությամբ և խոսում մեծ նկարչի բուստից: Դա շատ լավ է երևում Ն. Սթոունի բերած համեմատական նյութից: Բյուզանդական և իտալական արվեստից ներկայացված օրինակները ապացուցում են, որ, ինչպես վերև ասվեց, Քաղեոս Ավրամենցը ավանդական կերպարներ պատկերելու հետ մեկտեղ ստեղծել է և նորերը: Այստեղ տեղին է բերել իր իսկ՝ Քաղեոս Ավրա-

մենցի խոսքերը կատարած աշխատանքի մասին. «...աարտ սորա եղև ...ձեռամբ անարժան և պիտակ անուն կրանաւորի Թաղուսի Ավրամենց... ի յիշատակ յետ իմոյ եյանելոյն յաշխարհէս կամողաց զսա ջերմեհանդ սիրով զսա կարդալ, իսկ ձանձրացկոտացն յսել զսա առիթ կամելով լինել և նոցա հաղորդել ընդ երջանկացն, կարդալով և միտ առնելով՝ զարդարացի կենդանակիր պատկերաւոր և ծաղկաւոր ոսկով, դիգոնէ ի սիրոյ պայծառութեան ծաղկանց և պատկերաց կարդալ ձեռնարկեսցեն»<sup>5</sup>:

Ձեռագիրը, ինչպես ասվեց, հարուստ իր ոչ սովորական նկարազարդումներով, եզակի երկվայթ է հայկական մանրանկարչության մեջ: Այն հետագայում ստացել է նախօրինակի նշանակություն և բազմիցս ընդօրինակվել:

XV դարի Ղրիմում մյուս հուշարձանի երևան գալը Ն. Սթոունը կասկած է աստվածաբանական-իդիլիստիայական մի տեսության հետ, որը հիմնված էր հնագույն վանականական գաղափարախոսության վրա: Այն նորովի վերածնվեց Բյուզանդիայում XIV դարի վերջում և հայտնի է իսիխազմ տերմինով (Hesychasm—հունարեն «անդոր»)։ Դա միստիկական ուսմունք էր, որով մարդուն ցույց էր տրվում հոգին մաքրելու և Աստծուն հասնելու ճիշտ ուղին, նրա հետ միավորվելու ճանապարհը: Դրա համար անհրաժեշտ էր վերանայ աշխարհիկ կյանքից, խորասուզվել անդորության մեջ և աղերսանքով աղոթել՝ այն, ինչին կոչված էին անապատականները, բրիստոնյա առաջին վանականները: Այդ հին ուսմունքը նոր թափ ստացավ Բյուզանդիայում որպես հակադրություն աստվածաբանական ուղիների, որը հաստատվել էր բյուզանդական մշակույթում XIII դարից և որն արվեստում իր փայլուն արտացոլումը ստացավ այսպես կոչված «Պալեոլոգյան վերածննդի» հուշարձաններում:

Խոսելով իսիխազմի մասին, Ն. Սթոունը այդ ուսմունքի ակունքների թվում տեսնում է նաև հայկական աստվածաբանական մտքի առանձնահատկությունները, իր ասկետական, միստիկական միտումներով, կապված հայկական միաբարական եկեղեցու զավանական առանձնահատկությունների հետ: Այդ միտումները արտահայտվել են նաև հայկական միջնադարյան գրականության ու արվեստի մեջ: Մենագրության հեղինակը իրավացի է, երբ այդ կապակցությամբ անդրադառնում է հայկական միջնադարյան գրավոր մշակույթին և, մասնավորապես, Գրիգոր Նարեկացու Աղոթամատյանին: Տարակուսանք է առաջացնում, սակայն, միայն իսի-

4 Գրախոսվող աշխատության ստաջարանը, էջ 25:

5 Ժի դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 401:

խազմի, որպես ձևավորված ուսմունքի, հայկական միջավայրում րնկալման հնարավորությունը անգամ այնպիսի վայրերում, ինչպիսին էր Ղրիմը, ուր բոլոր պայմանները կային հայերի համար առնչվելու հունական մշակույթի հետ: Այդ առնչությունները իրոք եղել են և ոչ միայն Ղրիմում, այլև պատմական Արևմտյան Հայաստանի որոշ նահանգներում (ինչպես օրինակ Բարձր Հայքում): Բնտ երևույթին ավելի ճիշտ կլինի նկատել, որ XIV—XV դդ. Ղրիմի հայկական մանրանկարներում զգացվում է բյուզանդական արվեստի որոշ ազդեցություն: Իսկ վերջիսը րնորոշվում էր այդ ժամանակ երկու տարրեր ուղղություններով՝ մեկը հայտնի «Պալեոլոգյան վերածնունդ» անվամբ, իսկ մյուսը կապված է իսխազմի գաղափարների հետ: Մասնադեպները (Ս. Ավիրին, Վ. Լազարև և ուրիշներ) արդեն նկատել էին գրիմահայ արվեստում Պայեոլոգյան վերածննդի արտացոլման փաստը: Ն. Աթուրյան ատաչ է բաշում այդ ուղղությանը հակադիր վանականական գաղափարախոսության արտացոլման ինդիքը Ղրիմի հայկական մանրանկարչության մեջ:

Գրախոսվող մենագրությունում լուսարանվում են լուրարանչուր սուրբ վանականի պատմությունը, նրա ներկայացման պատկերագրական առանձնահատկությունները և, վերջապես, վարպետի գեղարվեստական ոճը: Հորինվածքային տեսարանները և դիմապատկերները քննված են առանձին-առանձին:

Գիրքն ունի իլյուստրատիվ նութ՝ 12 գունավոր և 95 սև ու սպիտակ նկարներ:

Ն. Աթուրյանի աշխատությունը անշուշտ մեծ հետաքրքրություն է ներկայացնում և յուրջ ներդրում է հայկական արվեստագիտության մեջ:

Արվեստագիտության դոկտոր  
Է. Մ. ԿՈՐԵՄԱՋՅԱՆ

Յ Կա մի փոքրիկ վրիպակ. լուսանկարների շարքում ներկայացված Կաֆայի Ս. Հովհաննես Մկրտիչի և Ս. Ստեփաննոսի եկեղեցիների պատկերների տակ եղած բացատրությունները խառնաշփոթ են: